



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2021 թվականի թիվ 100-Ա

ք. Երևան

«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2021 թվականի մայիսի 11-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 31 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից Օրենքով սահմանված ժամկետով չի պահպանվել իրենց հեռարձակած տեսալսողական հաղորդումների տեսագրությունները:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2021 թվականի մայիսի 11-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի մայիսի 13-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը որևէ պարզաբանում և բացատրություն չի ներկայացրել՝ Օրենքով սահմանված ժամկետով 2021 թվականի ապրիլի 21-ին հեռարձակված եթերի ամբողջական ձայնագրության չպահպանման վերաբերյալ:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ 2021 թվականի ապրիլի 23-ի թիվ 04-353 գրությամբ Հեռարձակողից պահանջել է ներկայացնել սույն թվականի ապրիլի 21-ին հեռարձակված եթերի ամբողջական ձայնագրությունը:

Հեռարձակողը 2021 թվականի մայիսի 07-ին Հանձնաժողով հասցեագրված գրությամբ տեղեկացրել է, որ էլեկտրաէներգիայի խափանումների հետևանքով շարքից դուրս է եկել պահուստային սերվերը, որը ձայնագրում է իրենց եթերը և նշված օրվա՝ 2021 թվականի ապրիլի 21-ի եթերի ձայնագրությունները չեն պահպանվել:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ լիցենզիա ստացած Հեռարձակողները պարտավոր են վարել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան և պահպանել իրենց հեռարձակած տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած 45 օր ժամկետով, բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքերի:

Համաձայն Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի՝ 45 օրը լրանալուց հետո տեսալսողական հաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները կարող են ջնջվել, եթե այդ ընթացքում հաղորդումներում տեղ գտած տեղեկությունների հերքման, ուղղման կամ դատական վեճերի առկայության վերաբերյալ Հեռարձակողը պատշաճ չի ծանուցվել: Նշված ձայնագրություններն ու տեսագրությունները կարող են չպահպանվել վիճելի հարցերի լուծումից հետո:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացված փաստերը, որի արդյունքում հայտնի է դարձել, որ Հեռարձակողը չի պահպանել սույն թվականի ապրիլի 21-ին հեռարձակված եթերի ամբողջական ձայնագրությունը, որը պարտավոր էր պահպանել հեռարձակման օրվանից սկսած 45 օր ժամկետով:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքով Հեռարձակողների համար պարտավորություն է սահմանված՝ պահպանել իրենց հեռարձակած տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած 45 օր ժամկետով, սակայն Հեռարձակողի կողմից չի պահպանվել Օրենքի պահանջը:

Փաստում ենք նաև, որ լիցենզիա ստացած Հեռարձակողը պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի պահանջը:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը որևէ ապացույց չի ներկայացրել, իսկ 2021 թվականի մայիսի 07-ին Հանձնաժողով հասցեագրված գրությամբ ներկայացված տեղեկությունն այն մասին, որ էլեկտրաէներգիայի խափանումների հետևանքով շարքից դուրս եկած պահուստային սերվերի պատճառով նշված օրվա եթերի ձայնագրությունը չի պահպանվել, համոզիչ փաստարկ չէ և բավարար հիմք չէ Հեռարձակողի նկատմամբ օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն չկիրառելու համար:

Այսպիսով, Հեռարձակողի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 17-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 17-րդ մասը սահմանում է.

«Հեռարձակողի կողմից հեռարձակված հաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները սույն օրենքով սահմանված ժամկետով չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 17-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱԿՈԲՅԱՆ**

S.

11 հունիսի 2021թ.

ք. Երևան